

ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻՆ ՈՐՊԵՍ ՀԱՅԱԳԵՏ

Պատմ. գիտ. դոկտոր Կ. Ն. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ

Հայրենական պատմության մեջ ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին մտել է ոչ միայն իբրև ականավոր գիտնական, այլև իբրև գիտության կազմակերպիչ և հասարակական գործիչ: Էրմիտաժ թանգարանի տնօրեն, որի ղեկավարությամբ այն դարձել էր գիտական խոշոր օջախ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադիրն ու առաջին պրեզիդենտը. 1950-ական թթ.¹ Լենինգրադի արևելագիտության դեկավար՝ համալսարանի արևելյան ֆակուլտետի դեկան և ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի հիմնադիր և վարիչ՝ ահա այդ կերպարի առավել աչքի ընկնող կողմերը: Այդ հատկությունները կարծես ինչ-որ չափով ետ են մղել Օրբելի գիտնականին, չնայած նրա գիտական վաստակը կասկածի տակ երբեք չի դրվել: Ընդհակառակը, Հ. Օրբելու գործունեությունը հասարակական ասպարեզում, նրա անժխտելի նվաճումները պայմանավորված են եղել նախ և առաջ այն հանգամանքով, որ գործիչը հանդես է եկել որպես գիտնական, որն ունի իր սեփական գիտական արժանիքները, ունի զուտ գիտական հարուստ և բովանդակալից կենսագրություն: Հովսեփ Օրբելու վայելած հսկայական հեղինակությունը ամենուրեք զուգորդվել է նրա գիտական վաստակի հետ:

Հ. Օրբելու գիտական ձգտումները ունեցել են լայն ընդգրկում: Հայագիտությունից բացի, նա ունի աշխատություններ քրդագիտության, իրանագիտության, վրացագիտության, ռուս մշակույթի պատմության բնագավառներում: Հանդես է եկել որպես պատմաբան, բանասեր, աղբյուրագետ, վիմագրագետ, հնագետ, լեզվաբան, բանագետ, արվեստագետ: Այժմ, երբ լույս են տեսել կյանքի օրոք անտիպ մնացած աշխատությունները, երբ կարելի է կարծիք կազմել դեռևս հրատարակված գործերի մասին, համոզվում ենք, որ նրա գրական ժառանգությունը աչքի է ընկնում նաև իր ծավալով: Ինչպես էլ մոտենալու լինենք հարցին, Հովսեփ Օրբելին մնում է XX դարի խոշորագույն հայագետներից մեկը:

Հ. Օրբելու աշխատությունների բաժանումը ըստ գիտական բնագավառների միշտ պայմանական է: Հայագիտությունը խաչաձևվում է արևելագիտության մյուս ճյուղերի հետ, հեղինակը երբեք չի սահմանափակվում միայն մեկ գիտակարգի մեթոդներով: Ծնշող մեծամասնությամբ ուսումնասիրության առարկան այս կամ այն մշակութային երևույթը կամ հուշարձանն է, իսկ նրա ճիշտ տեղը հարազատ համակարգում գտնելու համար անհրաժեշտ է բազմակողմանի մոտեցում:

Ավարտելով Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական և արևելյան լեզուների ֆակուլտետները, Հ. Օրբելին ձեռք բերեց խոր գիտելիքներ, սակայն վերջնական պատրաստությունը ստացավ Անիում: 1906 թ. նա մասնակցում էր Ն. Մառի ձեռնարկած պեղումներին, որտեղ (իր իսկ ասելով) «շարունակվում էր և՛ լեզուների, և՛ պատմության, և՛ բանասիրության, և՛ արվեստի պատմության ուսումնասիրությունը»¹: Շուտով Հ. Օրբելին նշանակվեց Անիի Հնագիտության տնօրեն, և ահա 1910 թ. «Անվո շարքի» Ա՝ 3-ում հրատա-

¹ Տե՛ս Կ. Ն. Ю з б а ш я н. Академик Иосиф Абгарович Орбели. 1887—1987. М., 1986, с. 14.

րակվեց ցուցանմուշների և առհասարակ պահվող առարկաների մի մասի դիտական ցուցակը²։ Առաջաբանում Հ. Օրբելին համառոտակի նկարագրում է 1892-ից մինչև 1909 թ. կատարված պեղումների պատմությունը, նույն շրջանում են հայտնաբերվել նաև ցուցակում արձանագրված իրերը։ Հատկապես մանրամասն է խոսում հեղինակը Գագիկ I Բագրատունու՝ կլոր տաճարի մանրակերտը ձեռքին արձանի մասին, էջեր է նվիրում իշխանուհի աղջկա շիրիմին, իր իսկ ձեռքով վերականգնված պղնձե ջահին, այսպես կոչված սնդկամաններին և այլն³։

Նույն 1910 թ. «Անվո շարքի» № 4-ում հրատարակվեց Հ. Օրբելու կազմած Անիի ուղեցույցը⁴։ Այդ գիրքը մատչելի ձևով հաղորդում էր հնություններին վերաբերող անհրաժեշտ բոլոր տվյալները։ Հակառակ նրան, որ գիրքը հասցեագրված էր ոչ մասնագետներին, այսինքն Անիի սովորական այցելուներին, հեղինակը չբավարարվեց զուտ փաստացի նկարագրությամբ, այլ շատ դեպքերում առաջարկեց իր սեփական լուսաբանությունը, հրամցրեց իր անձնական դիտարկումները։ Դա իսկական գիտական ուղեցույց է։ Գրքին կցված էր Ֆ. Կ. Մոսեիշի կազմած քարտեզը, որը հնարավորություն էր տալիս հեշտությամբ կողմնորոշվելու ավերակների քաղաքում։

Հայտնի է, որ 1918 թ. պեղումների մասնակից Աշխարհբեկ Քալանթարի և ուսուցիչ Հովսեփ Գալստյանի միջոցով պեղված իրերի մի մասը տեղափոխվեց Սանահնի վանքը, իսկ հետագայում մուտք գործեց Հայաստանի պատմության պետական թանգարանը⁵։ Երբ 1917 թ. թուրքերը մտան Անի, Հնադարանը ենթարկվեց ավերման։ Այժմ Անիի հնությունները սպառնալիքի տակ են, պահպանության որևէ աշխատանք չի տարվում, իսկ հայ գիտնականները կարող են դիտել Անին լավագույն դեպքում այս ասից։ Պարզ է, որ Հ. Օրբելու բարձր մակարդակով կազմած տեղեկատու հրատարակությունները (ինչպես նաև Ն. Մառի մանրամասն հաշվետվությունները) կոչված են ինչ-որ չափով վերականգնելու Բագրատունյաց մայրաքաղաքի մոտավոր պատկերը։

1911 թ. Հ. Օրբելին ռուսերեն հրատարակեց իր «Անվո ավերակները» փոքրիկ գրքուկը, որը նույն թվականին լույս տեսավ նաև «Արարատ» ամսագրում և առանձին՝ հայերեն թարգմանությամբ⁶։ Անիին նվիրված այդ համառոտ ակնարկում նա շարադրում է քաղաքի պատմությունը, ապա տալիս է նկարագիրը և համառոտակի խոսում պեղումների մասին։ Այդ աշխատությունը այսօր ևս կարող է ծառայել իբրև Անիի հնությունների ուսումնասիրության ներածական։

2 И. Орбели. Каталог Анийского музея древностей. СПб., 1910; И. А. Орбели. Избранные труды. Ереван, 1963, с. 23—102.

Այն դեպքում, երբ աշխատությունը վերահրատարակված է, հղում ենք միայն այդ՝ ընտիր երկերի ժողովածուն (ИТ)։ Լրիվ հղումները տե՛ս նախորդ ծանոթության մեջ վկայակոչված՝ Կ. Յուզբաշյանի գրքում։

3 Հմմտ. Հայաստանի պատմության պետական թանգարան. Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների. պրակ II. Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները. Եվգենյա Մուշեղյանի աշխատակցությամբ. Երևան, 1982։ Սնդկամանների մասին տե՛ս այժմ՝ Բ. Մ. Դжаицполадян. Сфероконические сосуды из Двина и Ани. Ереван, 1983. Հ. Օրբելին բաժանում էր այն կարծիքը, որ ձվաձև այդ անոթները եղել են սնդիկի համար։ Հ. Ջանփուլադյանը ցույց է տալիս, որ դրանք տօգտագործվել են ոչ միայն սնդիկի և նրա միացությունները պահպանելու համար, այլ ունեցել են ավելի լայն կիրառություն։ Օգտագործվել են կենցաղում որպես հարմար պահարան թանկարժեք, անուշահոտ յուղեր, շուտ ցնդող հեղուկներ, վարդաշուր պահելու համար (էջ 28)։

4 И. Орбели. Краткий путеводитель по городищу Ани (с планом).—ИТ, с. 103—132 (վերահրատարակվել է առանց քարտեզի)։

5 Հմմտ. Ն. Մուշեղյան. Եղվ. աշխ., էջ 5 (նշված է 1916 թ.)։

6 И. Орбели. Развалины Ани. История. Современное состояние. Раскопки. ИТ, с. 1—27.

Անիում Հ. Օրբելին ձեռնամուխ եղավ վիճաբար արձանագրությունների հավաքմանն ու հրատարակությանը՝ մի բնագավառ, ուր նրա անձնական ներդրումը հատկապես մեծ է։ Արձանագրությունների արժեքը՝ որպես սկզբնաղբյուրի, գիտակցել էին արդեն հին պատմիչները՝ Ստեփանոս Օրբելյանը (XIII դար) կամ Զաքարիա Սարկավազը (XVII դար)։ XIX դարում արձանագրություններ են հավաքում ու հրապարակում տասնյակ գիտնականներ՝ Մ. Բժշկյանը, Հ. Շահխաթունյանցը, Ս. Զալալյանցը, Ն. Սարգսյանը, Ա. Մխիթարյանը, Գ. Սրվանձտյանցը, Քաջբերունին, Մ. Բարխուդարյանցը, Մ. Սըմբատյանցը, Դ. Ալիշանը, Ա. Երիցյանը, Մ. Էմինը, Խ. Հովհաննիսյանը, Ե. Լալայանը, Կ. Բասմաջյանը, եվրոպական գիտնականներից Դյուրուա դը Մոնպերյոն, Մ. Բրոսեն, Վ. Լանգլուան և ուրիշները։ Վիճաբար արձանագրությունները ճանաչվում են որպես առաջնակարգ պատմական սկզբնաղբյուրներ։ Սակայն հրապարակումների մակարդակը չէր համապատասխանում հուշարձանների կարևորությունը։ Վիճաբարությունների ընթերցումը հատուկ գիտելիքներ է պահանջում, մինչդեռ դրանցով զբաղվողները հրատարակում էին հապճեպ կատարված, սխալաշատ ընդօրինակություններ։ Արձանագրությունները հրատարակվում էին հաճախ հատվածաբար, հրատարակիչը «շտկում» էր գրությունը, և դրա հետևանքով տեսադաշտից վրիպում էին, օրինակ, ռամկաբանության նմուշները, որոնք այնքան կարևոր են դարաշրջանի իսկական, ժողովրդական լեզուն հասկանալու համար։ Մինչդեռ այլ՝ հունա-լատինական նյութի վրա ձեռք էր բերված մեծ փորձ, որը հարկավոր էր կապել նաև հայոց արձանագրությունների հետ⁷։

1892—1893 թթ., ձեռնամուխ լինելով Անիի պեղումներին, Ն. Մառը ևս զբաղվեց արձանագրություններով, սակայն հետագայում վերահանձնարարեց այդ գործը Հ. Օրբելուն։ 1909 թ. Հ. Օրբելին ճանապարհորդություն կատարեց դեպի Խաչենի իշխանությունը, ընդօրինակեց 220 արձանագրություն։ Բայց օրակարգի վրա էր հայոց արձանագրությունների ընդհանուր դիվանի պատրաստումը, և հենց դրանով զբաղվեց Հ. Օրբելին հետագա տարիներին։

Վիճաբարի առանձնահատկություններից մեկն է կապագրությունը կամ կցագրությունը, երբ մեկ տառին միացվում են մյուս տառերի առանձին մանրամասներ, մի քանի տառ փաստորեն ձուլվում են։ Առաջարկելով իր ընթերցումը, հրապարակիչը պարտավոր է նախ և առաջ ներկայացնել արձանագրությունը հարազատ տեսքով, պահպանելով կցագրերը և հապավումները, վերադարձնելով բուն գրությունը։ Հ. Օրբելու կարծիքով, ամենից ձեռնտուն էր արձանագրությունները շարել հատուկ վիճագրական տառատեսակով. կարգավորելով իրեն հայտնի կցագրերը, նա պատվիրեց այդպիսի տառատեսակ և դրանով ապահովեց շարվածքը։ Նորություններ մտցնելով հրատարակության եղանակի մեջ, Հ. Օրբելին ելնում էր այն ընդհանուր սկզբունքից, որ արձանագրությունը մշակութային մի ամբողջություն է և հենց այդ ամբողջությամբ էլ պիտի ներկայացվի։

Շուտով մեկը մյուսի ետևից լույս տեսան Հ. Օրբելու աշխատությունները, որոնք նվիրված էին գերազանցապես հնագույն (VII դարից սկսած) արձանագրություններին⁸։ Այդ աշխատությունները հետազոտական բնույթի էին, հե-

⁷ Տե՛ս Ս. Բարխուդարյան. Հայկական վիճագրություն. էջ XV և հտ., հետևյալ հրատարակության մեջ՝ Դիվան հայ վիճագրության. պրակ I, Անի քաղաք, կաղմեց Հ. Ա. Օրբելի. Երևան, 1966, հմմտ. Վիճական տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց. կաղմեաց Կ. Կոստանիանց. Ս.—Պետերբուրգ, 1913 (Bibliotheca armeno-georgica, II), էջ I—XXVII (Ն. Մառի առաջարկը և Կ. Կոստանյանի նախաբանը)։

⁸ И. Орбели. Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII в.; Шесть армянских надписей VII—X вв.; Указатель слов и имен к 13 армянским надписям VII века; Две строительские надписи князей Камсараканов; Багаванский храм и его надписи; Армянские надписи на камне; Надпись Санаинского моста.—ИТ, с. 371—439, 451—476.

դիակեր ձգտում էր նրանց բազմակողմանի վերլուծությանը: Նրա պրպտումների արդյունքները պիտի հիմք ծառայեին ապագա հայոց արձանագրությունների դիվանին: Թե ինչպես էր պատկերացնում հեղինակը այդ հրատարակությունը, կարելի է դատել նրա՝ 1914 թ. լույս տեսած «Մարմաշենի արձանագրությունները» աշխատությունից, որը կազմում է «Հայոց վիմագրության հուշարձաններ» ծրագրված դիվանի առաջին պրակը⁹:

Այդ պրակը ընդգրկում է լեռնականից դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Մարմաշեն վանքի արձանագրությունները: Այստեղ համառոտակի նկարագրված են ինչպես վանքային համալիրը, այնպես էլ այն քարերը, որոնց վրա արձանագրություններ են պահպանվել: Այնուհետև կցագրային տառատեսակի օգնությամբ շարված են բուն արձանագրությունները, որոնց հետևում է ընթերցումը՝ բացված կապերով, բառանշատումով, վերականգնված բացերով, կրկնությունների կամ սխալների նշումով: Անհրաժեշտ դեպքերում մեջ է բերված մատենագիտական ցանկը, կազմված են նաև անձնանունների, աշխարհագրական և էթնիկական անվանումների ցանկեր: Կցված են արձանագրությունների լուսանկարներ, որոնք լրիվ պատկերացում են տալիս գրի առանձնահատկությունների մասին:

Նույն այդ ոճով պիտի հրատարակվեին նաև Անիի արձանագրությունները: Այնպես ստացվեց, սակայն, որ գիտնականը պատրաստեց տախտակներ, իր ձեռքով շարեց արձանագրությունները, հանեց անգամ փորձնական մամուլները, բայց լեռնագրադի 1924 թ. հայտնի ջրհեղեղի պատճառով, որը մեծ վնաս հասցրեց նաև գիտությունների ակադեմիայի տպարանին, կատարված աշխատանքը ի դերև անցավ, մնացին միայն տախտակները: 2. Օրբելու աշխատության հրատարակումը հետաձգվեց 42 տարով, լույս տեսավ միայն 1966 թ., սակայն բոլորովին այլ պայմաններում և փոփոխված եղանակով:

Դեռևս 1938 թ. Հ. Օրբելին հատուկ զեկուցագիր էր ներկայացրել արձանագրությունների հավաքման, ուսումնասիրման և դիվանի հրատարակման մասին: Այդ գրության հիման վրա Հայաստանի Ժողովուրդի հրապարակման և դրամական միջոցներ առանձնացրեց այդ գործը իրացնելու համար: Ծրագրով համաշխարհային պատերազմը արգելակեց այդ նախաձեռնությունը, սակայն 1954 թ. ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան կազմեց արձանագրագիտական մշտական գիտարշավ՝ սկզբում պատմության, հետագայում հնագիտության և ազգագրության ինստիտուտին կից: Զինված լինելով տեխնիկական համապատասխան միջոցներով, գիտարշավն անցավ աշխատանքի ըստ մշակված ծրագրի¹⁰: Հավաքչական աշխատանքին առընթեր պատրաստվում էր նաև Դիվանը, որի անդրանիկ պրակը լույս տեսավ 1960 թ.: Սեդրակ Բարխուդարյանի աշխատությամբ¹¹, Դիվանի գլխավոր խմբագիրն էր Հ. Օրբելին և դա ձևականություն չէր, քանի որ Դիվանը հետևում էր նրա՝ դեռևս 1910-ական թթ. մշակված սկզբունքներին: Մի հարցում միայն Դիվանը շեղվեց նախնական ծրագրից. վիմագիր տառատեսակը այլևս չկար, լեռնագրադի պաշարման տարիներին այն վերածուլվել էր¹²: Նկատի ունենալով այդ և մի շարք այլ, ավելի էական հանգամանքներ, արձանագրությունները սկսեցին հրատարակել տեխ-

9 Памятники армянской этнографии. 1. Надписи Мармашена. Собрал и приготовил к печати Иосиф Орбели. С 3 автотипическими таблицами. Пг., 1914.—IIТ, с. 440—450.

10 Ս. Բարխուդարյան. Հայկական վիմագրություն, էջ XXVII—XXVIII:

11 Դիվանի հայ վիմագրության. պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջանները, կազմեց Ս. Կ. Բարխուդարյան. Երևան, 1960:

12 Ս. Բարխուդարյանը (Հայկական վիմագրություն, էջ XXVIII) նշում է, որ Հ. Օրբելու ուղղագծերով պատրաստած հայերեն վիմագիր տառատեսակը ոչնչացավ 1924 թ. ջրհեղեղի ռամանակ: Սակայն Կ. Վ. Տրեվերը ինձ ասել է, որ այն վերածուլվել էր պատերազմի տարիներին: Այսպես թե այնպես, կորուստը մնում է ցավալի. տառատեսակը ինքնին վկայում էր, որ նախորդը պատահականություն չեն, այլ ինչ-որ շփոթված կազմում են հատուկ համակարգ:

նիկական գծագրերի եղանակով, իսկ նրանց ընթերցումը սովորական գլխատառ շարվածք է:

1966 թ. լույս տեսան, վերջապես, նաև Անիի արձանագրությունները¹³, Հեղինակի համաձայնությամբ պրակին, կատարելով համապատասխան լրացումներ, ամբողջական տեսք տվեց Ս. Բարխուդարյանը: Եթե անդրանիկ պրակում դժգոհությունները երբեմն անհաջող են եղել, ապա այս դեպքում նրանք աչքի են ընկնում կատարման վարպետությամբ: Պրակը բացվում է Հ. Օրբելու այն դասախոսությամբ, որը նա կարդացել էր Պետերբուրգի համալսարանում 1914 թ. սեպտեմբերի 6-ին, սկսելով իր Շիրակի վիմական արձանագրություններին նվիրված դասընթացը: Այնուհետև գալիս է Ս. Բարխուդարյանի հոդվածը, ուր ամփոփված է հայ վիմագրագիտության ուղին ընդհուպ մինչև պրակի հրապարակումը: Հրատարակված է 266 արձանագրություն՝ գծանկարներով, ընթերցումներով, գիտական համապատասխան սարվածքով, ցանկերով: Պրակում իրենց տեղը գտան նաև 25 տախտակ: Ջրհեղեղից հետո մնացել էր ընդամենը 800 լրակազմ տախտակ, և հենց այդ թվով որոշվեց պրակի տպաքանակը:

Դիվանի այդ պրակով գիտական շրջանառության մեջ մտան առաջնակարգ նշանակություն ունեցող արձանագրություններ. Անիի պրակը կրկին անգամ հաստատեց Դիվանի սկզբունքները, որոնք առկա են նաև հաջորդ պրակներում: Առ այսօր լույս է տեսել արդեն 6 գիրք (1960—1982 թթ.): Հաջորդությունը մեծ չափով ապահովվեց Հ. Օրբելու անձնական ներդրումով և այն հեղինակությամբ, որը նա վայելում էր հայ վիմագրագիտության բնագավառում:

Վերլուծելով Անիի արձանագրությունների տերմինաբանությունը, Հ. Օրբելին իր 1921 թ. հոդվածում կատարեց կարևոր դիտարկում: Պարզվում է, որ վիմագրերի «արձան» բառը նշանակել է նաև աշտարակ, հանդես եկել որպես «բուռն» բառի հոմանիշ: Հոգևածագիրը պարզաբանում է նաև հետևյալը. եթե արձանագրության մեջ ասված է, որ կառույցը շինել է այս կամ այն անձնավորությունը, ապա «շինել» տերմինը միշտ չէ, որ հարկավոր է հասկանալ բառացի: «Շինողը» կարող էր պարզապես վճարել արդեն կատարված աշխատանքի համար և իրավունք ստանալ հավերժացնել արձանագրության մեջ իր անունը¹⁴:

Մասնակցելով Անիի պեղումներին, Հ. Օրբելին մի շարք աշխատություններ է գրում, որոնք նվիրված են Հայաստանի նյութական մշակույթի առանձին նմուշների: 1909 թ. լույս է տեսնում հաշենի իշխան Հասան Զալալին պատկանած երախակալի պատյանի ուսումնասիրությունը¹⁵: Նույն թվականի ամռանը նա մի ճանապարհորդություն է ձեռնարկում դեպի հաշեն (Արցախ, այժմ Լեռնային Ղարաբաղ), ուսումնասիրության առարկա դարձնելով խաչքարերի վրա եղած՝ կենցաղային բովանդակությամբ բարձրաքանդակները¹⁶: 1912 թ. լույս է տեսնում միջնադարյան մի զանգի ուսումնասիրություն՝ հեղինակը ապացուցում է առարկայի հայկական ծագումը, հավանաբար Շիրակից¹⁷: Իսկ 1916 թ. նա լույս է ընծայում արծաթյա երկու շերեփներին նվիրված հոդված¹⁸:

¹³ Իրիվ. հղումը տե՛ս ծան. 7:

¹⁴ И. А. Орбели. О двух терминах в надписях Анн.—ИТ, с. 440—450.

¹⁵ И. Орбели. Нефритовая кинжальная рукоять с армянской надписью; И. Асан Джалал, князь Хаченский.—ИТ, с. 135—174.

¹⁶ И. Орбели. Бытовые рельефы на хаченских крестных камнях XII и XIII веков.— ИТ, с. 196—204. հաշենում կատարված աշխատանքների մասին տե՛ս նաև Բ. Ա. Ուլուբաբյան. հաշենի իշխանությունը X—XVI դարերում. Երևան, 1975, էջ 19—23:

¹⁷ И. Орбели. Колокол с аниискими орнаментальными мотивами XII—XIII века.—ИТ, с. 175—195.

¹⁸ И. Орбели. Два серебряных ковша XVI века с армянской и греческой надписями.—ИТ, с. 205—216.

Վերջինս հատկապես կարևոր է. շերեփներից մեկը ունի հայերեն, արձանագրություններ, իսկ մյուսը՝ հունարեն: Զ. Օրբելին համոզիչ փաստեր է բերում, որ երկուսն էլ ծագում են լեհահայոց շրջաններից, երկուսն էլ XVI դարի են: Շերեփները այժմ էրմիտաժում են. 1930-ական թթ. Զ. Օրբելուն հաջողվեց թանգարանի համար գնել նույնատիպ երրորդ շերեփը՝ դարձյալ հայերեն արձանագրությամբ. հրատարակվեց նաև այդ վերջինը¹⁹: Այդ աշխատությունները լրիվ պահպանել են իրենց նշանակությունը և այժմ էլ կարող են օրինակ ծառայել որպես մշակութային հուշարձանի խորաթափանց վերլուծություն:

1910 թ., երբ Զ. Օրբելին արևելյան լեզուների ֆակուլտետի վերջին կուրսում էր, Ն. Մառը առաջարկեց գիտությունների ակադեմիային՝ գործուղել իր սանին Վան, որպեսզի նա ուսումնասիրի տեղական հնությունները և հավաքի բարբառագիտական նյութեր: Համալսարանում Զ. Օրբելին հաճախում էր բարբառագիտության դասերին, հատուկ զբաղվում Մուշի և Մոկսի բարբառներով: 1911 թ. հուլիսի 1-ին Զ. Օրբելին ուղևորվեց դեպի Արևմտյան Հայաստան: Նա մնաց այնտեղ մինչև 1912 թ., ձմեռը անցկացնելով Վանում, իսկ հիմնական ժամանակը տրամադրելով Մոկսում կատարված դաշտային աշխատանքներին: Նա գրառեց տեղական բանահյուսության մի քանի տասնյակ կտորներ, գրանցեց Մոկսի ազգագրությանը վերաբերող նյութեր: Մոկսի բնակչությունը խառն էր, այստեղ ապրում էին թե՛ հայեր, թե՛ քրդեր: Զ. Օրբելին կազմեց հայերեն-ռուսերեն և քրդերեն-ռուսերեն բարբառագիտական բառարաններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով թե՛ իմաստաբանության, թե՛ հնչյունաբանության վրա: Տառադարձության հատուկ նշանները թույլ տվեցին նրան արձանագրել տեղի արտասանության բոլոր նրբությունները: Տեղեկություններ էր հավաքում միայն նրանցից, ովքեր երբեք Մոկսից դուրս չէին եկել, ուստի պահպանել էին իրենց լեզուն անաղարտությամբ: Նրան հաջողվեց գրի առնել նաև թաղիքագործների և բուրդ դոդողների (կատանների) գաղտնի լեզուն. տարվա մեծ մասը նրանք մասնակցում էին արտագնա աշխատանքներին, օտարության մեջ էլ օգտվում իրենց արհեստական լեզվից²⁰:

Այդ աշխատանքի կարևորությունը պայմանավորված է առնվազն երեք հանգամանքով: Նախ, կատարողը դեռևս Պետերբուրգում ձեռք էր բերել մասնագիտական լավ գիտելիքներ, իսկ տեղում առավել ևս կատարելագործվել: Երկրորդ՝ իր հիմնական նյութը հավաքել էր տեղում, բուն տեղացիներից, մինչդեռ նրա նախորդները գրի էին առնում լեզուն նրանցից, ովքեր շատ ժամանակ անց էին կացնում դրսում, որոնց լեզուն չէր կալուղ պահպանել Մոկսի բարբառի բոլոր առանձնահատկությունները: Եվ երրորդ հանգամանքը՝ լինելով եվրոպացի առաջին գիտնականը, որը աշխատել էր հենց Մոկսում, նա եղավ առհասարակ վերջինը, որովհետև 1915 թ. Մեծ եղեռնի հետևանքով Մոկսի ազգաբնակչությունը կամ ոչնչացվեց, կամ ընդմիշտ լքեց հայրենիքը. հայերը և քրդերը դատապարտվեցին նույն ճակատագրին:

Այնպես ստացվեց, որ Զ. Օրբելու մեծ աշխատանքի արդյունքները գիտնականի օրոք լույս չտեսան: 1982 թ. հրապարակվեց միայն մի փոքրիկ մասը²¹, որն ընդգրկում է Մոկսի ազգագրական ակնարկը և գրի առնված բնագրերի ռուսերեն թարգմանությունները: Իսկ հայերեն և քրդերեն բառարանները, հայերեն ընագրերը, որոնք շնորհիվ հանգուցյալ Ռուսուհան Օրբելու և Մ. Մուրադյանի, Ի. Յուկերմանի, Ժ. Մուսայելյանի ջանքերի լրիվ պատրաստ են տպագրության, մնում են այնուամենայնիվ անտիպ: 1968 թ. լույս տեսավ Զ. Օրբելու ընտիր աշխատությունների առաջին հատորը՝ խմբագրական հանձնա-

19 А. Я. Каковкин. Армянский серебряный ковш XVI века.—*ЗУМ* 94. «Архивыер հայ. դիտ.», 1977, № 3:

20 Տե՛ս մասնավորապես Զ. Օրբելու հաղիստությունը՝ Предварительный отчет о командировке в Азиатскую Турцию в 1911—1912 годах.—*ИТ.*, с. 188—195.

21 И. А. Орбели. Фольклор и быт Мокса. М., 1982. Տե՛ս նաև Из архива И. А. Орбели.— «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 2:

ժողովի կողմից գրված ծանուցման մեջ ասված է, որ Մոկսին վերաբերող ուսումնասիրությունը (որը ինքը հեղինակը անվանում էր «Նյութեր հայ և քուրդ բարբառագիտության») ամբողջությամբ կմտնի Երկրորդ հատորի մեջ²²։ Մեր պարտքն է՝ թե՛ ի հիշատակ Հ. Օրբելու և թե՛ հանուն գիտության պահանջների՝ իրացնել այդ երկրորդ հատորի հրապարակումը։

Հայ բանահյուսության հարցերին Հ. Օրբելին վերադարձավ 1930-ական թթ. վերջերին։ Նրա անմիջական մասնակցությամբ պատրաստվեց «Սասունցի Դավիթ» դյուցազներգի համահավաք բնագիրը, որը մինչ այժմ գիտական շրջանառության մեջ է, խմբագրեց ռուսերեն թարգմանությունը, որն առայժմ միակն է։ Նշենք, որ միջազգային բանագիտությանը մեր դյուցազներգությունը ծանոթ է հենց այդ թարգմանության շնորհիվ։ Ռուսերեն հրատարակության համար նա մի մեծ նախաբան է գրում, որը հետագայում ընդլայնված ձևով լույս է տեսնում որպես առանձին մենագրություն՝ ռուսերեն և հայերեն²³։ Հ. Օրբելին ցույց է տալիս, որ «Սասնա ծռերի» կորիզը անհամեմատ ավելի հին ծագում ունի, նրա առանձին կողմերը հեռանում են մեզանից ոչ թե մեկ, այլ մի քանի հազարամյակներ։ Դյուցազներգությունը շատ բարդ զարգացում է ապրել։ «Դյուցազներգության հիմնական գծի զարգացումը՝ բնության ուժերի՝ իսկական մարդու վերամարմնավորվելու ընթացքն է, այն ուժերի, որոնք մարդկային մտածողության կազմավորման արշալույսին գազանային կամ մարդկայինացած ձևեր էին ընդունում։ Հերոսների յուրաքանչյուր հաջորդ սերունդը է՛լ ավելի մոտ է երկրին, է՛լ ավելի մոտ է երկրային մարդու կերպարանքին»²⁴։ «Դյուցազներգության հերոսները իրենց ծագումով, իրենց գերմարդկային ուժով, իրենց հատկություններով և իրենց գործերով որքան էլ որ կապված լինեն բնության և նրա ուժերի հետ (իսկ հնադարյան մարդը անհամեմատ ավելի է զգացել այդ ուժերը, քան նա, ով սովորել է ենթարկվել իրեն դրանց թեկուզ մի մասը)՝ այդ հերոսները խորապես մարդկային են։ Դրանք կենդանի մարդիկ են, օժտված են արիությամբ և բարձր հատկություններով, բայց իրենց մեջ կրում են նաև մարդկային թուլություններ, ուստի և ոչ միայն նրանց սրխրանքները, այլև թուլություններն են վառ արտահայտվել նրանց երկրային կյանքի պատումներում»²⁵։ Այդ դյուցազներգությունը ժողովրդական է ոչ միայն նրանով, որ ապրում է ժողովրդի խորքում և նրա կողմից ասվում, ոչ միայն նրանով, որ մինչև վերջին ժամանակները, մինչև մեր օրերը ապրում է ժողովրդի բանավոր հաղորդմամբ, ոչ միայն նրանով, որ տարբերակների լեզուն ժողովրդական է, կառուցվածքով և բառային կազմով շատ հեռու հին կամ նոր գրական հայերենից։ Դյուցազներգությունը ժողովրդական է նախ և առաջ նրանով, որ նրա հերոսների ամբողջ աշխարհայացքը անխզելիորեն կապված է ժողովրդի հետ, և ոչ թե նրանց հետ, ովքեր հազարամյակներ իրենց ձեռքում են պահել հայ ժողովրդի բախտը»²⁶։

Այն շրջանի համեմատությամբ, երբ գրել էր Հ. Օրբելին, բանագիտության տեսությունը շատ առաջ է գնացել։ Այնուամենայնիվ Հ. Օրբելու ժառանգությունը այդ բնագավառում ևս չի արժեքազրկվել։ Կարևոր է հիմնականը՝ «Սասնա ծռերի» հարկավոր է տեսնել զարգացման մեջ, չկապել դյուցազներգությունը պատմական մի համեմատաբար կարճատև ժամանակի հետ, այլ մեկնել այն իբրև ժողովրդի ստեղծագործական մտքի բազմադարյան գործունեության արդյունք, ընդ որում օրինաչափություններ են պարզվում, որոնք հատուկ են ոչ միայն տվյալ տարածքին կամ տվյալ ժողովրդին, այլ էական

²² И. А. Орбели. Избранные труды. Т. 1. Из истории культуры и искусства Армении X—XIII вв., М., 1968, с. 7—8. Այդ հատորը լույս է տեսել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի և ՀՍՀՄ գիտությունների ակադեմիայի մականիշով։

²³ Давид Сасунский. Армянский народный эпос. М.—Л., 1939; Հ. Օրբելիի Հայկական ժողովրդական էպոս. Երևան, 1956, նույնը՝ ռուսերեն։

²⁴ Давид Сасунский, с. XXV.

²⁵ Նույն տեղում, էջ XXVI։

²⁶ Նույն տեղում, էջ XXVII։

2 «Հանգիստ», № 1

գծերով նաև համամարդկային են: Եվ իհարկե, շատ կարևոր են այն դիտողությունները, որոնք արել է գիտնականը կոնկրետ նյութի, կոնկրետ տվյալների վերաբերյալ:

Նշենք միաժամանակ, որ այն փայլն ու թափը, որն ունեցավ 1939 թ. նշված «Սասունցի Դավթի» հազարամյա հոբելյանը, մեծ մասամբ Հ. Օրբելու շնորհիվ և նվիրվածության արդյունք էր: Նրա ջանքերով էր, որ մեր դուցազներգությունը, դուրս գալով ազգային սահմաններից, դարձավ համամարդկային մշակույթի սեփականություն:

Գիտնականի գրավոր ժառանգության կազմում առանձին տեղ են գրավում հայոց հին գրականության կոթողների թարգմանությունները ռուսերեն: Գրաբարից ռուսերեն գիտական փոխադրությունների ավանդույթը առաջացել էր XIX դարի երկրորդ կեսում: Շնորհիվ Լազարյան ճեմարանի ուսուցչապետ Մկրտիչ էմինի, Պետերբուրգի համալսարանի դասախոս Քերովբե Պատկանյանի հայոց գրականության նմուշները զգալիորեն լայնացրին իրենց գիտական շրջանառության սահմանները: Հատկապես հարկավոր է նշել Մ. էմինի գրչին պատկանող Սովսես խորենացու «Հայոց պատմության» ընտիր թարգմանությունը (1858 թ.): Այժմ այդ թարգմանությունը մեծ չափով հնացել է, սակայն տասնյակ տարիներ այն եղել է ճշգրտության և գրական-ոճական արժանիքների օրինակ: XIX դարի ռուսերեն թարգմանությունները մրցում էին Ֆրանսայիցու փոխադրությունների հետ (Վ. Լանգլուա, Մ. Բրոսս, է: Պրյուդոմ և մյուսներ)՝ բնօրինակին իրենց հարազատությամբ երբեմն տեղի տալով, երբեմն էլ գերազանցելով դրանց: XX դարում Հ. Օրբելին եղել է այդ ավանդույթի ամենից աչքի ընկնող ժառանգորդներից մեկը, նրա աշխատություններում մենք կգտնենք բազմաթիվ առանձին հատվածների թարգմանություններ, որոնք կատարված են, որպես կանոն, ամենայն ճշգրտությամբ: 1930-ական թթ. նա ձեռնամուխ եղավ միջնադարյան հայկական առակների ուսումնասիրությանը, միաժամանակ թարգմանությանը (ավելորդ չէ մեկ անգամ ևս հիշեցնել, որ հին լեզվից կատարված փոխադրությունը նաև բնագրի մեկնություն է): Աղթամար կղզու և Վառնա լճի հարավային ափում եղած շինությունների մասին կարևոր և յուրահատուկ տեղեկություններ է հաղորդում Թովմա Արծրունու Շարունակողը: Հ. Օրբելին տվել է այդ հատվածների ճշգրիտ թարգմանությունը: Իսկ 1950-ական թթ. նա զբաղվել է նաև մյուս պատմիչների թարգմանությամբ. ամբողջապես թարգմանելով Եղիշեի գործը, ապա Ղազար Փարպեցու Պատմության երկրորդ դրվագը, մեծ կտոններ Թովմա Արծրունուց, Հովհան Մամիկոնյանից, Կեղծ Շապուհ Բագրատունուց: 1971 թ. Եղիշեի թարգմանությունը լույս է տեսել առանձին գրքով²⁷, այժմ տողերիս հեղինակը պատրաստում է այդ գրքի նոր հրատարակությունը: Բացի այդ, Ղազար Փարպեցու ամբողջական թարգմանության կազմում կհրատարակվի Հ. Օրբելու գրչին պատկանող երկրորդ դրվագի փոխադրությունը:

Ասացինք, որ 1931 թ. Հ. Օրբելին ընդհուպ զբաղվեց հայ առակների թարգմանությամբ և ուսումնասիրությամբ: Հայոց հին գրականության այդ մարգարիտների իմաստավորումը սկիզբ է առնում Ն. Մառի մագիստրոսական եռահատոր աշխատությունից, որը 1894—1899 թթ. հրատարակվել է «Ժողովածոյք առակաց Վարդանայ» («Сборникъ притч Вардана») խորագրով: Զեռնամուխ լինելով հսկայական քանակությամբ պահպանված հում նյութի մշակմանը, այլ հարցերի հետ մեկտեղ, Ն. Մառը նպատակ էր դրել լուսաբանել հայ առակների կապը նույնանման այլալեզու հուշարձանների հետ: Մառի հետազոտության շնորհիվ հայկական առակները գտան իրենց տեղը գրական այդ տեսակի միջազգային համակարգում: Աշխատությունն ունի հսկայական ընդգրկում, հիմնական հարցերի հետ այստեղ զուգընթացաբար պարզվում են բաղ-

²⁷ Егяшэ. О Вардане и войне армянской. Перевод с древнеармянского акад. И. А. Орбелли. Подготовка к изданию, предисловие и примечания К. Н. Юзбашяна. Ереван, 1971.

մաթիվ մանրամասնություններ՝ բանագիտական, պատմագիտական, պատմամշակութային բնույթի։ Այդ մեծ աշխատության հիմնական դրույթներով էր առաջնորդվել Հ. Օրբելին, երբ ձեռնամուխ է եղել Մխիթար Գոշի, Վարդանի, Ողոմախանի հեղինակած առակների հետազոտությանը։ 1938 թ. լույս տեսավ նրա հոդվածը՝ «Ռուսթավելու հերոսները և նրանց հպատակները. ստորին խավերի ինքնագիտակցությունը XII—XIII դարերի առակներում»²⁸, 1956 թ. հրատարակվեց մեծ ուսումնասիրության համառոտ տարբերակը²⁹, և միայն հետմահու հրատարակությամբ «Միջնադարյան Հայաստանի առակները» մատչելի դարձան ընթերցողին ողջ ժալալով³⁰։

«Առակները» պատկանում են Հ. Օրբելու ամենից հետաքրքիր աշխատությունների թվին։ Ընդգրկելով հսկայական նյութ, հեղինակը ներկայացրել է XII—XIII դդ. Հայաստանի հասարակական կյանքն ու մշակույթը և փորձ կատարել պարզաբանելու, թե ինչպիսի՞ արձագանք է գտել դարաշրջանը առակներում։ Խոսքն անշուշտ անուղղակի արձագանքի մասին է՝ ո՛չ առակները, ո՛չ էլ նրանց խրատական բնույթի ամփոփումները անմիջապես չեն արտահայտել պատմամշակութային, հասարակական երևույթները։

XII—XIII դդ. հայկական կյանքում մեծ փոփոխություններ են տեղի ունենում, հասարակական զարգացումը զգալի չափով պայմանավորված է քաղաքային կյանքի աշխուժացմամբ։ Այժմ ոչ թե վանքը կամ ֆեոդալական բերդը, այլ քաղաքն է որոշում մշակույթի հիմնական միտումները։ Աշխարհիկ տարրը աչքի է ընկնում մշակութային բոլոր բնագավառներում, և հենց այդ է պայմանավորել առակագրության առաջացումը, — գտնում է Հ. Օրբելին։ Կատարյալ տիրապետելով նյութին, Հ. Օրբելին սրամիտ դիտողություններ է անում, կապ հաստատում իրարից երբեմն շատ հեռու գտնվող երևույթների միջև։ Բազմահմուտ հեղինակը օրինակներ է բերում տարբեր բնագավառներից, համադրում և հակադրում դրանք, պարզում տեղական առանձնահատկությունները և տեղում գործող ընդհանուր օրինաչափությունները։ Եվ որպես վերջին և շատ կարևոր քայլ՝ ձգտում է ապացուցել, որ առակներում արտահայտված հասարակական, բարոյագիտական և այլ գաղափարներ արտահայտել են հենց այդ տվյալ ժամանակաշրջանի առանձնահատկությունները։

Մինչդեռ պահանջելով ավանդական ժանրի, առակներն ըստ երևույթին ամփոփել են մարդկային մտքի զարգացման արդյունքները ավելի լայն ընդգրկումով, կուտակել հասարակական դարավոր փորձը։ Ժիշտ է, այդ փորձի ընդհանրացումը պատկանում է XII—XIII դդ., թե՛ Մխիթար Գոշի, թե՛ Վարդան Այգեկցու առակները սկզբունքորեն նոր երևույթ են եղել։ Հասարակական կառուցվածքի, հասարակական հարաբերությունների յուրովի մեկնությունը անախադեպ մի երևույթ էր մեր միջնադարյան մշակույթում։ Առակների գաղափարները եղել են այժմեական այն իմաստով, որ կենդանի գուգորդություններ են առաջացրել ունկնդիրների կամ ընթերցողների մոտ։ Բայց կոնկրետացումը, ի տարբերություն նոր շրջանի առակների, հատուկ չէր այդ գրականությանը. որոշակի ակնարկներ կոնկրետ իրականության վերաբերյալ այնտեղ դժվար թե լինեին։ Հ. Օրբելու միտումը տուրք էր իր ժամանակին։ Ժիշտ այդպես է մոտեցել հարցին նաև Մանուկ Աբեղյանը³¹, նշենք, որ 1956 թ. հրատարակված գրքում Հ. Օրբելին մեղմացրել էր այդ մոտեցումը, մինչդեռ հետմահու լույս տեսած աշխատության մեջ այն բացահայտ է։

²⁸ II. A. Орбели. Герои Руставели и их подданные. Самосознание эпосов в баснях XII—XIII веков.—ИТ, с. 559—569.

²⁹ Иосиф Орбели. Басни средневековой Армении. М.—Л., 1956.

³⁰ II. A. Орбели. Басни средневековой Армении.—Избранные труды в двух томах, т. I, М.—Л., 1968, с. 209—385, 420—504, 521—534.

³¹ Տե՛ս Մ. Աբեղյան. Հայոց միջնադարյան առակներն և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ. Երևան, 1935. Նաև՝ Հայոց հին գրականության պատմություն. գիրք երկրորդ. Երևան, 1946, էջ 169—187։

2. Օրրելու ժառանգության կազմում պատվավոր տեղ է գրավում Վանա լճի հարավային ափին և հատկապես Աղթամար կղզու վրա եղած շինությունների ուսումնասիրությունը: 1912 թ. ապրիլին նա այցելեց կղզին, մանրամասն նկարագրեց հուշակավոր տաճարը, հավաքեց նրա պատերին եղած արձանագրությունները: 1921 թ. հրատարակեց իր հոդվածը, որը նվիրված էր տաճարի գմբեթի սկզբնական ձևին³², Հեղինակը հատուկ ուշադրությամբ վերաբերվեց արևմտյան պատի վրա քանդակված Գագիկ I Արծրունու ձեռքին եղած տաճարի մանրակերտին: Մանրակերտի գմբեթը կիսազնդած է, մինչդեռ բուն տաճարն ունի 16 նիստից կազմված թմբուկ, որի վրա հենվում է ևս 16 նիստանոց բուրգը: Գիտնականի կարծիքով, սկզբնապես տաճարն էլ է ունեցել կիսազնդած գմբեթ, որը վերակառուցվել է XIV դարի սուլթանի կեսում, ստանալով այսօրվա տեսքը:

Աղթամարի հուշարձանները տարիներ անընդհատ գրավել են Հ. Օրբելու ուշադրությունը: 1921, 1939, 1948, 1950 թթ. նա զեկուցումներ է կարդացել այդ հարցի շուրջ: Այն աշխատությունը, որը լույս է տեսել հետմահու, հիմնականում ավարտվել է 1948 թ.³³,

Այդ աշխատության մեջ Հ. Օրբելին նախ և առաջ վերլուծում է Թովմա Արծրունու Շարունակողի այն հատվածները, որոնք վերաբերում են Գագիկ Արծրունու շինարարական գործունեությանը: Աղթամարի Ս. Խաչ տաճարից բացի ոչինչ չի պահպանվել. և գիտնականը, ելնելով գրավոր վկայությունից և դիմելով հնարավոր զուգահեռներին, ձգտում է մտովի վերականգնել այն կառույցները, որոնք, նրա կարծիքով, հիմք են ծառայել պատմիչի պատկերավոր էջերին. Հ. Օրբելին զարմանալի երանգներ է բացահայտում գրավոր աղբյուրի շարադրանքում, վերլուծում է տերմինաբանությունը և գալիս եզրակացությունների, որոնք չափազանց կարևոր են թե՛ բանասերի, թե՛ ճարտարագիտության պատմաբանի համար: Միշտ չէ, իհարկե, որ մենք կարող ենք վստահել պատմիչի ճշգրտությանը, նրա խոսքը կարող է պայմանավորված լինել նաև «գրական էտիկետով»³⁴: Բացի այդ, շինությունները չեն պահպանվել, ուստի յուրաքանչյուր վերականգնում կարող է լինել այս կամ այն չափ պայմանական: Պետք է ընդգծենք, սակայն, որ տվյալ դեպքում պայմանականությունը խարսխվում է հարուստ և բազմակողմանի զուգահեռ նյութի վրա, ուստի շատ դեպքերում ապացուցված փաստի որակ է ստանում:

Աշխատության բուն կորիզը կազմում է տաճարի ուսումնասիրությունը: Հ. Օրբելին շարունակում է ուշադիր հետևել պատմիչի խոսքերին, համոզվելով և համոզելով ընթերցողին, որքան ճշմարտապատում է Շարունակողը թեկուզ այդ հատվածում: Նրա ճշտությունը, գտնում է հեղինակը, հիմք է տալիս վստահելու նաև այն շենքերի նկարագրությանը, որոնք չեն պահպանվել: Ս. Խաչ եկեղեցին և նրա հոյակապ քանդակները հետազոտված և նկարագրված են ամենայն մանրամասնությամբ: Այժմ էլ, երբ Աղթամարի մասին կան մի շարք խորաթափանց մեծագրական ուսումնասիրություններ, Հ. Օրբելու գործը շարունակում է, այնուամենայնիվ, պահպանել իր արժեքն իբրև պատմաշակութային վերլուծության փայլուն օրինակ:

Երբ փորձ ենք կատարում ընդհանուր հայացք ձգել Հովսեփ Օրբելու գրավոր ողջ ժառանգության վրա, իսկույն նկատում ենք, որ սկզբնական շրջանի աշխատությունները շեշտակի տարբերվում են 1920-ական թթ. հետո ստեղծած երկերից: Առաջին աշխատություններում գերակշռում է վերլուծականը, հեղինակը խուսափում է լայն ընդհանրացումներից: Նրան հետաքրքրում են

³² И. А. Орбели. О первоначальной форме купола Ахтамарского храма.— ИТ, с. 222—228.

³³ И. А. Орбели. Избранные труды в двух томах, т. 1, с 17—204, 389—419.

³⁴ К. Юзбашьян. Архитектурная тема в армянской средневековой историографии.—Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում. զեկուցումների ժողովածու, Կ. III, Երևան, 12—18 սեպտեմբերի, 1978, էջ 30—31:

առանձին փաստեր, առանձին երևույթներ, ճիշտ է՝ ընդհանուրի հետ եղած աղերսներով: Իսկ հաջորդ շրջանում նա ձգտում է ավելի պարզել ընդհանուրը, ամփոփել հայտնի փաստերը՝ ներկայացնելով դարաշրջանի, նրա մշակույթի համապատկերը:

1920—30-ական թթ. դրված հոգվածները ընդգրկում են ողջ Առաջավոր Ասիայի մշակույթը, գիտնականը օրինաչափություններ է բացահայտում, որոնք հատուկ են մի շարք մշակույթներին: Նա ցույց է տալիս, որ «սասանյան» կոչվող արվեստի ստեղծմանը մասնակցել են ոչ միայն Իրանի ժողովուրդները, այլև նրանց հարևանները, և թե ինչպիսի ազդեցություն է գործել այն այդ ժողովուրդների գրականության, հավատալիքների, կենցաղի վրա³⁵: 1923 թ. էրմիտաժում բացվեց մահմեդական հախճապների ցուցահանդես: Ցուցահանդեսի կապակցությամբ հրատարակված իր ակնարկում Հ. Օրբելին հատուկ կանգ առավ «մահմեդական արվեստ» բնորոշման վրա, ասելով, որ այն չի ծածկում ստեղծարար բոլոր տարրերը, որոնք իրենցն են ներդրել այդ «մահմեդական մշակույթի» մեջ³⁶: «Մահմեդական Արևելք» անվանումը պայմանական է, — ընդգծում էր նա 1925 թ., անդրադառնալով նույն անվամբ բացված ցուցահանդեսին: Այն երկրներում, ուր մարտնչող դավանանքները՝ քրիստոնեությունն ու իսլամը գոյակցել են կողք-կողքի, դժվար թե հնարավոր լինի բացարձակ ձևով սահմանազատել մշակույթները³⁷: Օրինակներից մեկը սելջուկյան դամբարաններն են: Այդ հարցին գիտնականը անդրադարձել էր արդեն 1914 թ. համալսարանական իր դասախոսությունում, նույնը կրկնել 1935 թ., իրանական արվեստի և հնագիտության միջազգային VIII համաժողովին ներկայացված զեկուցումում: Հ. Օրբելին ցույց տվեց, որ այդ դամբարանները ճշտիվ կրկնում են հայ և վրաց եկեղեցիների գմբեթները իրենց թմբուկներով, դառնալով նստակյաց, քոչվոր ցեղերը կամա-ակամա յուրացնում էին իրենց կողմից նվաճված ժողովուրդների մշակույթը³⁸: Մշակույթի ոլորտում դավանական սահմանազատումը հարաբերական է՝ այս է Հ. Օրբելու հիմնական գրույթը. «Քրիստոնյա Արևելք» և «Մահմեդական Արևելք» հասկացությունները անկարելի է մեկը մյուսին հակադրել բացարձակ ձևով³⁹: Պատկերավոր, երբեմն աֆորիստական եղանակով ներկայացված այդ գաղափարները կարևոր են անշուշտ նաև հայ մշակույթի ճիշտ ըմբռնման համար:

1938 թ., երբ երկրում լայնորեն նշվում էր Շոթա Ռուսթավելու 750-ամյակը, Հ. Օրբելին հրատարակության պատրաստեց «Ռուսթավելու դարաշրջանի հուշարձաններ» մի փոքրիկ ժողովածու⁴⁰: Այդ ժողովածուում հենց իր գրչին են պատկանում առաջաբանը, ներածականը և 7 հոդված: Ինչպես և ժողովածուի մյուս մասնակիցները, որպես ուսումնասիրության առարկա Հ. Օրբելին ընտրել էր այնպիսի հուշարձաններ ու այնպիսի երևույթներ, որոնք նրա կարծիքով լավագույնս արտահայտել են XII—XIII դդ. հասարակական կյանքն ու մշակույթը: «Ռուսթավելու դարաշրջան» ասելով Հ. Օրբելին նկատի է ունեցել մի մեծ տարածք՝ Վրաստան, Հայաստան, Հայկական Կիլիկիա: «Իշխանական միջավայրից դուրս եկած Ռուսթավելու պոեմը, Անի քաղաքն իր բնակչության բազմազանությամբ և ժողովրդի խորքից եկող կծու ու թարմ հումորով լի առակները—ահա սրանք են այն գեղատեսիլ հայելու մասերը, որի ճառագայթների խաչաձևման մեջ իր իսկական տեսքով է խոյանում Ռուսթավելու դարաշրջանի Կովկասը»⁴¹: Ժողովածուում հրապարակված հոդվածներում հե-

35 И. Орбели. Временная выставка сасанидских древностей. Пг., 1922.

36 И. Орбели. Мусульманские изразцы.—ИТ, с. 253—254.

37 И. Орбели. Мусульманский Восток. Л., 1925, с. 3—4.

38 ИТ, с. 369.

39 Տե՛ս նաև И. А. Орбели. О классовых корнях некоторых традиций исторической науки.—ИТ, с. 292—297.

40 Памятники эпохи Руставели. Л., 1938.

41 Տե՛ս ИТ, с. 581.

դիմանալն ասես սինթեզել էր նուրբ վերլուծության այն հատկությունները, որոնցով նա մուտք էր գործել մեծ գիտություն, և 1920—30-ական թթ. ձևակերպած ընդհանուր գաղափարները Առաջավոր Ասիայի մշակութային զարգացման վերաբերյալ: Տարբեր տեսանկյուններից մոտենալով ուսումնասիրության առարկային, Հ. Օրբելին ներկայացնում էր նրա բազմաֆունկցիոնալ էությունը, որոշում նրա անզր հնարավորին «ափ լայն» մշակութային համակարգում: Իսկ դա հնարավոր է միայն համաեռոմանի ուսումնասիրության եղանակով, երբ գիտնականը ի վիճակի է լինում գիմել մի շարք գիտակարգների կամ գոնե լրիվ օգտվել տվյալ բնագավառում կատարված գիտական վերլուծության արդյունքներից: Հայ մշակույթի ասպարեզում Հովսեփ Օրբելին եղել է ռազմիրա:

* * *

Հովսեփ Օրբելին եղել է փայլուն ոճարան, նրա աշխատությունները գիտական արձակի անզուգական նմուշներ են: Այդ հանգամանքը ինքնին գրավիչ ուժ է հազորգել գիտնականի երկերին: Աշխատությունների մի զգալի մասը հասցեագրված է ոչ միայն մասնագետներին, այլև, այսպես ասած, ընթերցողների լայն շրջաններին, ուստի գիտական բովանդակությունը հրամցվել է հանրամատչելի եղանակով: Այդ է պատճառներից մեկը, որ Հ. Օրբելու գիտական հայացքները լայն տարածում են գտել:

Բայց, իհարկե, այդ աշխատությունների էությունն է պայմանավորել նախ և առաջ այն ազդեցությունը, որը նրանք գործել են և շարունակում են գործել հայագիտական մտքի զարգացման վրա: Հեղինակը երբեք չի րավարարվել մագնիսային քննությամբ, միշտ ձգտել է թափանցել երևույթի խորքը և գտնել նրա անզր համապատասխան կարգում: Այն էլ ավելացնենք, որ գիտնականը շոշափել է մեծ մասամբ իրոք խոշոր, սկզբունքային նշանակություն ունեցող հարցեր:

Գիտությունը երբեք կանգ չի առնում. անընդհատ վերանայում է իր գրույթները: Հ. Օրբելու որոշ տեսակետներ ևս այժմ ենթակա են վերանայման: Սակայն որպես ամբողջություն նրա գիտական ժառանգությունը պահպանել է իր նշանակությունը՝ ծառայելով ոչ միայն այսօրվա, այլ ինչ-որ չափով նաև վաղվա գիտական ընթացքին:

ИОСИФ ОРБЕЛИ—АРМЕНИСТ

Доктор ист. наук К. Н. ЮЗБАШЯН

Резюме

Академик И. А. Орбели оставил заметный след в развитии таких дисциплин, как курдоведение, иранистика, грузиноведение, однако наиболее значительный раздел в его научном наследии составляют труды по арменистике. Как ученый, он окончательно сформировался, участвуя в раскопках Анн, и составленный им путеводитель по городищу, а также каталог Анпйского музея древностей приобрели ныне особую актуальность. С именем ученого связан современный этап в развитии армянской эпиграфики, его личный вклад в этой области (издание надписей Анн, издание и исследование ранних армянских надписей) исключительно велик. В 1911—1912 гг. И. А. Орбели собрал богатый материал по армянской и курдской диалектологии, по этнографии населения Мокса. Он—автор исследования, посвященных отдельным памятникам армянского искусства и культуры, его перу принадлежат образцовые переводы с древнеармянского, исследование армянских средневековых басен и эпоса, монографическое исследование строительной деятельности царя Гагика I Арцруни на острове Ахтамар. Особенностью творческого метода И. А. Орбели является комплексное изучение памятников культуры, широкий охват породившей их эпохи. Его письменное наследие сохраняет свое значение и в наши дни.